5. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է **Պատվիրատուի ղեկավարի որոշման բողոքարկման** հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12 և 362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<<ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ <<ՍԱՄ-ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանի 03.09.2024թ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Հա. ԵԴ2/9476/02/24 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա.Օհանյան) 25.11.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am